ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ.-ի թվականի մարտի 4-ից 8-ը
Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
ք. Հոնկոնգ
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Անդրանիկ Գևորգյան- ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության պետի տեղակալ,
   Կարեն Բալայան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի պետ /Ժ.Թ.Պ/
2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն ք. Հոնկոնգ, 2024թ.-ի թվականի մարտի 4-ից 8-ը:
3. **Հրավիրող կողմը.**
   Հրավերը ստացվել է 2023թ.-ին՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիայի կողմից:
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Գործուղումը նախատեսված էր Հոնկոնգում կայանալիք Շնագիտական 6-րդ միջազգային ֆորումին մասնակցելու նպատակով
5. **Քննարկված թեմաները.**
   Գործուղման ընթացքում քննարկվել են ստորև ներկայացված թեմաները
   - Ժամանակակից «K9» ձևաչափով խելացի և նորարարական տեխնոլոգիաների ներդրումը շների աշխատանքում
   - Քայլերը դեպի նոր միտում «K9» ձևաչափով գործունեության մեջ
   - Սինթետիկ թմրամիջոցների սպառնալիքը և շների կիրառումը դրանց հայտնաբերման գործում
   - Նորարական մեթոդաբանությունը «կապտագոն, տրամադոլ և պրեգաբալին» տեսակի թմրամիջոցների հայտնաբերման գործում:
   - Շնավարժության հիմունքների հարցերն ու պատասխանները,
   - Շների վարքի և վարժեցման ֆիզիոլոգիայի հիմունքները,
   - Շների վարժեցման ընթացքում կիրառվող խթանիչները (գրգռիչները),
   - Շների աշխատանքը հեշտացնող և բարդացնող պայմանները,
   - Տարբեր տեսակի ծառայությունների համար կիրառվող վարժեցման պիտանի շների ընտրությունը:
6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել Համաշխարհային մաքսային կազմակերպության ղեկավարների, վերոնշյալ ֆորումի կազմակերպիչների, ք. Հոնկոնգի մաքսատան ղեկավարի, Մեծ Բրիտանիայի սահմանապահ ուժերի ղեկավարի, Սաուդյան Արաբիայի «ZAKAT» հարկային և մաքսային մարմնի ղեկավարի, Ավստրալիայի սահմանային ուժերի ղեկավարի, Հունաստանի Հանրապետության անկախ պետական եկամուտների մարմնի ղեկավարի, Քենիայի Հանրապետության մաքսային և սահմանային հսկողության ղեկավարի, Մալթայի Հնարապետության հարկային և մաքսային վարչության ղեկավարի,

Գանայի Հանրապետության մաքսատան ղեկավարի, Քենիայի Հանրապետության մաքսային և սահմանային հսկողության մարմնի ղեկավարի, Հնդկաստանի Հանրապետության անուղղակի հարկերի և մաքսային կենտրոնական խորհրդի ղեկավարի, Գվատեմալայի Հանրապետության մաքսային ծառայության շնավարժության հատուկ դպրոցի ղեկավարի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության մաքսատան ղեկավարի, Կանադայի սահմանային ծառայությունների գործակալության ղեկավարի, Ֆիջիի Հանրապետության եկամուտների և մաքսային ծառայության ղեկավարի, ինչպես նաև՝ ՌԴ Դաշնային մաքսային ծառայության շնագիտական կենտրոնի ղեկավարի հետ:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են մաքսային ծառայությունների շնագիտական կենտրոնների ծառայողական շների ուսուցման մեթոդաբանությունները, թմրամիջոցների դեմ պայքարի և անդրազգային սահմանային հանցագործությունների դեմ պայքարի ապագայի հեռանկարները, թմրանյութերի և հոգեմետ դեղերի, զենք-զինամթերքի և պայթուցիկ նյութերի, թութունի և թղթադրամների հայտնաբերման ոլորտում զարգացումները, նախատեսվող բարեփոխումները, մաքրացեղ շների բուծման և վարժեցման ծրագրի մարտահրավերներն ու առավելությունները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում Ռուսաստանի Դաշնության ներկայացուցչի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն ՌԴ համապատասխան կառույցում անցկացնել ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ շնագիտական /կենտրոն/ բաժնի անասնաբույժի վերապատրաստումը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Գործուղման ընթացքում առաջարկվել է, որ ՀՀ Պետական Եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժինը պաշտոնապես անդամակցի Համաշխարհային մաքսային Կազմակերպությանը: Անդամակցելու դեպքում ակնկալվում է, որ ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ շնագիտական /կենտրոն/ բաժինը կստանա ռեգիոնալ կենտրոնի կարգավիճակ:

Առաջարկվել է նաև հաջորդ, պարբերական անցկացվող շնագիտական 7-րդ միջազգային ֆորում, որը տեղի է ունենալու 2026թ.-ին անցկացնել Հայաստանի Հանրապետությունում:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Անդրանիկ Գևորգյան

Կարեն Բալայան

«12» մարտի 2024թ.